ԵՐԻՏԱՍԱՐԴ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԴՊՐՈՑԻ ՈՒՆԿՆԴԻՐՆԵՐԸ ԱՅՑԵԼԵԼ ԵՆ ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏ

05.11.2015 12:34

ՀՀ փաստաբանների պալատում երեկ՝ նոյեմբերի 4-ին, հյուրընկալվել են Երիտասարդ առաջնորդների հակակոռուպցիոն դպրոցի ունկնդիրները: Նրանք Պալատի աշխատակազմի ղեկավար Մանե Կարապետյանի ուղեկցությամբ շրջայց են են կատարել շենքում, եղել են Հանրային պաշտպանի գրասենյակում, որի ղեկավար Մելանյա Առուստամյանը ներկայացրել է գրասենյակի գործունեությունը: Փաստաբանական դպրոցի փոխտնօրեն Ռոման Ահարոնյանը ծանոթացրել է դպրոցի աշխատանքներին: Երիտասարդ առաջնորդների հակակոռուպցիոն դպրոցի ունկնդիրները հանդիպել են Փաստաբանների պալատի նախագահ Արա Զոհրաբյանին: Վերջինս ունկնդիրներին ներկայացրել է Փաստաբանական դպրոց ընդունելության և որակավորման ընթացակարգը: Նրա խոսքով բոլոր հնարավոր միջոցները օգտագործվել է, որպեսզի միայն գիտելիքի առկայության դեպքում դիմորդը կարողանա հաղթահարել ընդունելության քննությունը: ‘**Մեխանիզմները բարդացրել են քննության անցկացման ընթացակարգը, սակայն զերծ են պահում թե որակավորման քննությունները թե ընդունելության քննությունները կոռուպցիոն տարրերից’**,-նշել է Զոհրաբյանը: Կոռուպցիայի դեմ պայքարը Փաստաբանների պալատի առաջնահերթություններից է. «Առաջին իսկ օրվանից դպրոցի ունկնդիրներին դասերի ընթացքում քարոզում ենք, որ հեռու մնան կոռուպցիայից»:

Հանդիպման ընթացքում երիտասարդ առաջնորդները հետաքրքրվել են Փաստաբանների պալատի ընդհանուր գործունեությունից ու փաստաբանական համայնքի խնդիրներից:

ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՄԱՄՈՒԼԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
PRESS SERVICE OF CHAMBER OF ADVOCATES OF R



ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՄԱՄՈՒԼԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
PRESS SERVICE OF CHAMBER OF ADVOCATES OF R



Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })